

ՏԱՂ ՈՍԿԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ

Ողկոյգ պտղաւէտ յոստոյն մախնոյ սերեալ.
Ծառ նորաբողոք ծաղկափռքիք՝ քերկրեալ:

Սաղարք գեղազարք գեղապահոյն ընծիւղ.
Տունկ տերեւալիր երանգ երանգ գունով:

Կինամուն մարդոս՝ եւ պալասան հոտով.
Քըբբում եւ ստաշխէ մարդկան ցեղի բուրեալ:

Աշտանակ յուսոյ երփնադիտակ փայլեալ.
Արփի եթերեան բացայայտեալ հրաշխւ:

Նկար բազմալի քոյ միածնի հօտի.
Եւ պարզ հայելի կըրօզ կերպին իսկի:

Ի մարմնոյ սեռէ ծաղիկ վարդի բուսեալ.
Հընուալեաւ հասով գգիմս մերայնոց լցեալ:

Երկընծիւղ շուշան վերաստեղնեալ զարդու.
Շնորհիւ երկնայնով գրոյսն բարձեր մահու:

Իամբ հանուրբ գունոց՝ եւ տնջալեաց մարդոց.
Առ քեզ ներեալ գեր յօրինուած մշտուկ:

Երփներփն գունադիւտ շաղաշարեալ գիտով.
Խուռն երամագարդ՝ եւ պարամած հիւսով:

Իւրաքանչիւր մասն շիկագեղեալ ոսկով.
Փայլփայլեն համայն ոստ դրախտի ծաղկով:

Աղբիւր բարեհամ՝ եւ քաղցրահոտ առու.
Հանդարտախաղաց եւ ծաղրանեմ վըտակ:

Ներամըմանեալ ասացելոյն վեհի.
Կենդանոյ ջրոյն ըստ Սաղօմօնեան երգի:

Յօղալից պարտէզ երկնաւորին իջմամբ.
Գեղմն Գեղէօնին զարմանահրաշ տեսլեամբ:

Նիւթեղէն տաճար աննիւթական գոյին.
Տիրածին սուրբ Կոյս՝ եւ մարմնաբան Բանին:

Ողորմած կամօբ՝ եւ քաղցրալիր սըրտի.
Այժմ եւ յարակայ հովանի լեր ըզձի:

Յորսողէն պահել ըզՄիածնի քոյ հօտս.
Մանաւանդ գերգօզս՝ եւ գովեստիս զըծօզս:

ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ

«Զեղքածուրիւն Յերկինս»
Ամսդերտամ, 1705, էջ 344-346